**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 օգոստոսի 2021 թվականի թիվ 212-Ա**

## «ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2021 թվականի օգոստոսի 30-ի նիստում, քննարկելով «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 8-ին «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 90-Ա որոշմամբ (այսուհետ՝ **Թիվ 90-Ա որոշում**) հարուցել է վարույթ (այսուհետ՝ **Վարույթ**):

***2. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը 2021 թվականի մայիսի 31-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվում են մի շարք ապրանքներ, որոնք իրենց արտադրական գործընթացի տարբեր ցիկլերի բնութագրերի և հետևաբար, նաև որակական և այլ հատկանիշների տեսանկյունից առանձնանում են Ընկերության կողմից արտադրվող այլ արտադրատեսակներից:

Ընկերությունը 2021 թվականի օգոստոսի 11-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ վերջինիս կողմից Հանձնաժողովի վկայակոչած տեսքի պիտակներով ապրանքների իրացումը հասարակությանը մոլորեցնելու որևէ նպատակ չի հետապնդել, իսկ Հանձնաժողովի կողմից նշված հարցի բարձրացումից հետո Ընկերության կողմից այդպիսի պիտակներով ապրանքների իրացումն անմիջապես դադարեցվել է:

***3. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.***

1) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի մայիսի 13-ի և մայիսի 19-ի ««Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մոտ դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 46-Ա և թիվ 51-Ա հրամանների, ինչպես նաև 2021 թվականի մայիսի 13-ի ««Մաջիդ Ալ Ֆութաիմ Հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մոտ դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 47-Ա հրամանի հիման վրա համապատասխանաբար 2021 թվականի մայիսի 14-ին և մայիսի 20-ին «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 10 շ. և ք. Երևան, Կոմիտասի 60/2 հասցեներում, մայիսի 14-ին ««Մաջիդ Ալ Ֆութաիմ Հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Քարֆուր» սուպերմարկետում՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող., շ. 16 հասցեում, իրականացվել են դիտանցումներ, որոնց արդյունքում կազմվել են համապատասխանաբար «Դիտանցումների արդյունքների վերաբերյալ» թիվ 46 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 46 արձանագրություն**), «Դիտանցումների արդյունքների վերաբերյալ» թիվ 51 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 51 արձանագրություն)** և «Դիտանցումների արդյունքների վերաբերյալ» թիվ 47 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 47 արձանագրություն**)։

Թիվ 46 և 47 արձանագրությունների համաձայն՝ «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 10 շ.) և «Մաջիդ Ալ Ֆութաիմ Հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Քարֆուր» սուպերմարկետում (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող., շ. 16) վաճառվում են Ընկերության կողմից արտադրվող 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, ինչպես նաև «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե։

Թիվ 51 արձանագրության համաձայն՝ ք. Երևան, Կոմիտասի 60/2 հասցեում գտնվող, «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում վաճառքում առկա են Ընկերության կողմից արտադրվող «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ», որոնց վրա առկա է «eco» մակնշումը (այսուհետ՝ **Ապրանքներ**)։

2) Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի մայիսի 20-ի թիվ ԳԳ-1235 և թիվ 2021 թվականի մայիսի 24-ի թիվ ԳԳ-1294 գրություններով (այսուհետ՝ **Գրություններ**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել Ապրանքների օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության հավաստագր(եր)ի (սերտիֆիկատ(ներ)ի) պատճեն(ներ)ը։

Ընկերությունը, ի պատասխան **Գրությունների**, 2021 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողովին ներկայացված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 2016 թվականին

ստացել է էկոլոգիական անվտանգության համապատասխանության սերտիֆիկատ (այսուհետ նաև՝ **Սերտիֆիկատ**), որի պատճենը կցվել է գրությանը:

3) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԳԳ-1471 գրությամբ (այսուհետ՝ **Թիվ ԳԳ-1471 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ապրանքների տուփերի և/կամ փաթեթվածքների վրա «ECO», «բարձր որակի հավկիթ «eco», «eco foods» և «eco» մակնշումների իրականացման շարժառիթների վերաբերյալ, ինչպես նաև Ապրանքների իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ՝ նշելով ամսաթիվը:

Ընկերությունը, ի պատասխան **Թիվ ԳԳ-1471 գրության**, 2021 թվականի հունիսի 21-ի գրությամբ Հանձնաժողովին հայտնել է, որ Ապրանքներն սկսել է իրացնել 2021 թվականի առաջին եռամսյակից, իսկ ներկայումս Ընկերությունը Հանձնաժողովի կողմից վկայակոչված պիտակներով ապրանքների իրացում չի իրականացվում, Ընկերության կողմից մշակվել է նոր լոգոտիպ և փորձ է կատարվել իր նոր արտադրանքը շուկայում ներկայացնել նոր պիտակով: Ընկերությունը նշել է, որ շարժառիթների մասով նշվել է 2021 թվականի մայիսի 31-ի գրության մեջ:

4) Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2021 թվականի հուլիսի 20-ի թիվ ՀԿ-1821 գրությամբ (այսուհետ՝ **Թիվ ՀԿ-1821 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ընկերության կողմից 2020 թվականին և 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում Ապրանքների իրացման ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ (առանձնացված՝ ըստ ժամանակահատվածների):

Ընկերությունը, ի պատասխան Թիվ ՀԿ-1821 գրության, 2021 թվականի օգոստոսի 11-ին Հանձնաժողովին հայտնել է, որ Ապրանքների իրացումը շուկայում սկսել է 2021 թվականի առաջին եռամսյակից իսկ իրացման ծավալները կազմել են 2021 թվականի մինչև հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում ընդհանուր դրամի չափով: Մասնավորապես՝ 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու - տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե – կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավ» - կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավի բուդ» - կգ.՝ ընդհանուր , «պաղեցված հավի թև» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով և «պաղեցված հավի դոշ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով:

5) Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ ՀԿ-1833 գրությամբ (այսուհետ՝ **Թիվ ՀԿ-1833 գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով տրամադրել Ընկերության 2020 թվականի տարեկան, ինչպես նաև 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածի հասույթների չափերի մասին (առանձնացված՝ ըստ ժամանակահատվածների) տեղեկատվություն:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2020 թվականի հասույթի չափը կազմել է դրամ:

***4. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Ընկերության կողմից արտադրվում և իրացվում են 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ», որոնց վրա առկա է «eco» մակնշումը:

2. Ընկերությունը Հանձնաժողով չի ներկայացրել Ապրանքների օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի (սերտիֆիկատի) պատճենը:

3. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքների իրացումը դադարեցրել է:

4. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքները սկսել է իրացնել 2021 թվականի առաջին եռամսյակից:

5. Ընկերությունը 2021 թվականի առաջին եռամսյակից մինչև հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում Ապրանքներն իրացրել է ընդհանուր դրամի չափով: Մասնավորապես՝ 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու - տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե – կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավ» - կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավի բուդ» - կգ.՝ ընդհանուր , «պաղեցված հավի թև» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով և «պաղեցված հավի դոշ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով:

6. Ընկերության 2020 թվականի հասույթի չափը կազմել է դրամ:

***5. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

*1) **Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Նույն խմբագրությամբ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Նույն խմբագրությամբ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Նույն խմբագրությամբ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով մոլորեցումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում, մասնավորապես, տեղի ունենալ ապրանքի աշխարհագրական ծագման, ինչպես նաև սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված առանձնահատկությունների նկատմամբ: Մոլորեցում է համարվում նաև ապրանքների որակն անհիմն չափազանցնելը, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), կեղծիքը գովազդատուի անձի վերաբերյալ: Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:

Օրենքի վերոգրյալ իրավակարգավորումներին նույնաբովանդակ դրույթներ նախատեսված են նաև գործող խմբագրությամբ Օրենքի 16-րդ և 21-րդ հոդվածներով:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացնում է սերտիֆիկացման մարմինը «օրգանական» կամ «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատ տալու միջոցով: Սերտիֆիկատի տրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ, ինչպես նաև գովազդում նշվում է «օրգանական» կամ մակնշման առումով համարժեք «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինները կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, միայն այն դեպքում, եթե՝

1) այն օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդով արտադրված և հավաստված (սերտիֆիկացված) արտադրանք է,

2) ներմուծվող արտադրանքն ուղեկցվում է օրգանական գյուղատնտեսության կանոններով սահմանված համապատասխանության հավաստման փաստաթղթերով:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և (կամ) շրջանառություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող սննդամթերքի և (կամ) սննդամթերքի մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող և (կամ) շրջանառող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և (կամ) օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքը պետք է մակնշված լինի համապատասխան նշանով և ուղեկցվի սերտիֆիկատով: Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության նշանի, համապատասխանության սերտիֆիկատի ձևերը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Այսպիսով, Ընկերության կողմից արտադրվող 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով հավի ձու, 10 հատանոց տուփով «բարձր որակի հավկիթ» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով «բարձր որակի հավկիթ» նշումներով հավի ձու, հավի դոշի ֆիլե, «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքներն իրացվում են «ECO» և «eco» բառերի մակնշմամբ, ինչն էլ հասարակության մոտ կարող է թյուր տպավորություն ստեղծել, որ դրանք հանդիսանում են հավաստված (սերտիֆիկացված) օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, մինչդեռ տվյալ ապրանքները օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրեր (սերտիֆիկատներ) չունեն: Այսինքն՝ Ապրանքներն օրգանական գյուղատնտեսության վարման կանոններով արտադրված չեն:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված ռուսական «Անալեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված «Ապրանքների, ծառայությունների և շրջակա միջավայրի օբյեկտների կամավոր սերտիֆիկացման համակարգ՝ ըստ էկոլոգիական ինտեգրալ անվտանգության մակարդակի» («СИСТЕМА ДОБРОВОЛЬНОЙ СЕРТИФИКАЦИИ ПРОДУКЦИИ, РАБОТ, УСЛУГ И ОБЪЕКТОВ СРЕДЫ ПО УРОВНЮ ИНТЕГРАЛЬНОЙ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ») համապատասխանության սերտիֆիկատին, ապա հարկ է նշել, որ այն չի կարող հավաստել Ապրանքների օրգանական լինելու փաստը, հետևաբար սույն դեպքում այն նշանակություն չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ապրանքների տուփերի և փաթեթվածքների վրա «ECO» և «eco» մակնշելն այն դեպքում, երբ Ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, հանգեցրել է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության:

***2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Նույնաբովանդակ դրույթներ են նախատեսված նաև մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 31-րդ և 36-րդ հոդվածներով:

*Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը, ի թիվս այլնի, հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.*

***իրավախախտման բնույթը.*** Ընկերության կողմից իրավախախտումը դրսևորվել է անբարեխիղճ մրցակցության գործողությամբ, մասնավորապես՝ հասարակության մոլորեցմամբ, քանի որ Ապրանքների տուփերի և փաթեթվածքների վրա մակնշվել են «ECO» և «eco» արտահայտություններն այն դեպքում, երբ Ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, ինչը սպառողների մոտ կարող է թյուր տպավորություն ստեղծել (ապակողմնորոշել), որ Ապրանքներն օրգանական գյուղատնտեսության վարման կանոններին համապատասխան սերտիֆիկացված է և համարվում է օրգանական գյուղատնտեսական արտադրանք:

***իրավախախտման տևողությունը.*** Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը «ECO» և «eco»

արտահայտությունների մակնշմամբ Ապրանքներն սկսել է իրացնել 2021 թվականի առաջին եռամսյակից, իսկ Հանձնաժողովի կողմից Վարույթի շրջանակներում «ECO» և «eco» արտահայտությունների մակնշմամբ Ապրանքների իրացման այլ ժամկետների վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել:

***տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը.*** Ընկերությունը գործունեություն է ծավալում սննդամթերքի՝ հավի մսի և հավի ձվի արտադրության ոլորտում:

***իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա.*** Ընկերության կողմից թույլ տրված իրավախախտման արդյունքում սպառողները զրկվում են «ECO» և «eco» արտահայտություններով մակնշված Ապրանքները հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներից տարբերակելու հնարավորությունից և Ընկերության կողմից իրացվող Ապրանքները գնում են՝ կարծելով, որ դրանք հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք:

Ընկերության կողմից «ECO» և «eco» արտահայտություններով Ապրանքների իրացումն առանց համապատասխան հավաստագրի առկայության, որի ստանալը կապված է ռեսուրսների ներդրման հետ, մրցակցային առավելություն է տալիս այն տնտեսավարող սուբյեկտների համեմատ, որոնք տրամադրել են պահանջվող ռեսուրսները և ստացել հավաստագիր:

***տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը.*** Վարույթի շրջանակներում Ընկերությունը հայտնել է, որ դադարեցրել է Ապրանքների իրացումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: (…)

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:»:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ իրավախախտման հետևանքները վերացված լինելու վերաբերյալ վարույթով պատասխանողի կողմից ներկայացված տվյալները և տեղեկությունները, հաշվի առնելով գործում հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայությունը, Հանձնաժողովի կողմից ընդունվում են որպես հավաստի: Ընդ որում, Հանձնաժողով կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացնելու համար վարույթով պատասխանողը կրում է պատասխանատվություն:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությանն անհրաժեշտ է տալ նախազգուշացում:

***6. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին մասով, «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «eco» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությանը տալ նախազգուշացում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. օգոստոս 30
Երևան